ՍՈՒՐԲ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«...Եղիցի սա ամենեցուն,
որք տեառնագրին սովաւ՝
իւղ ցնծութեան եւ զգեստ լուսոյ»:
(Մաշտոց ծիսամատյան)

1. ՎԱՌՎԵՑ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԸ ԵՓԵԼՈՒ ԿՐԱԿԸ

Բերկրանք ու խանդավառություն էր հուլիսի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Առավոտյան ժամերգությունից հետո թափորը, Ամենայն Հայոց Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի գլխավորությամբ, հանդիսավորապես Վեհարանից ուղղվեց դեպի Հին Վեհարան, որի մոտ պետք է տեղի ունենար Սրբալույս Մյուռոնի եփման անհրաժեշտ նյութերի օրհնության արարողությունը:

Հանդիսությունը, որին մասնակցում էին Մայրավանքիս միաբաններ, քահանաներ, սարկավագներ և հավատացյալ ժողովուրդը, սկսվեց «Տերունական աղոթք»-ով: Ապա երգվեց Մյուռոնօրհնության «Որ յառաջագոյն յօրէնս» շարականը, հավարտ որի Սուրբ Գրքից ընթերցվեց Հովհաննես առաքյալի թուղթը՝ ուղղված Կաթողիկե Եկեղեցուն:

Մյուռոնօրհնության կանոնի համապատասխան աղոթքի ընթերցումից հետո, հատուկ աղոթասացությամբ Ամենակարող Տիրոջ օրհնությունը հայցեց Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը, ապա օրհնեց անուշաբույր յուղերը, տարբեր ծաղիկներից ու բույսերից հավաքված 40 տեսակի նյութերը, ինչպես նաև Սուրբ Մյուռոնի եփման կաթսան:

Հնչեց «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը, որին հաջորդեց «Պահպանիչ»-ը:

Հավարտ «Պահպանիչ»-ի ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Ն. Ս. Օծությունը՝ ի մասնավորի նշելով, թե Մյուռոնը՝ մեր կյանքում Աստծո ներկայության դրոշմը, Տիրոջ կամքով թող կրկին վերադրոշմվի մեր սրտերին, մեր հոգիներին և մեր կյանքի ուղիղ ընթացքին, որպեսզի ունենանք մե՛կ ժողովուրդ, մե՛կ հայրենիք և մե՛կ Եկեղեցի:

Ս. Մյուռոնի եփման օրհնության հանդիսավոր արարողությունն ավարտվեց «Հայր մեր»-ի երգեցողությամբ: Թափորն ուղղվեց դեպի Վեհարան:

Այնուհետև կատարվեց Մյուռոնը եփելու նախապատրաստական աշխատանքը: Օրհնված կաթսայի մեջ, ըստ կարգի, նախ լցվեց ձիթապտղի յուղը, ապա 40 տեսակի մանրացված ծաղիկներն ու խոտաբույսերը, դափնու յուղը, ճերմակ գինին և վարդաջուրը: Թանկարժեք նյութերով առլեցուն կաթսայի բերանը փակվեց խմորով և իջեցվեց ավելի մեծ կաթսայի մեջ, որը ջրի գոլորշիով եփվեց երեք օր ու գիշեր՝ սաղմոսների ընթերցման ուղեկցությամբ:

Համաձայն Մյուռոնօրհնության կանոնի, Ս. Մյուռոնօրհնությունից 40 օր առաջ, մինչև սեպտեմբերի 8-ը, ձիթենու մաքուր յուղով լի կաթսան դրվեց Մայր

Տաճարի Ավագ Խորանի ձախակողմում և ծածկվեց Որբահյուս քողով: Այս ամենը կատարվեց հատուկ աղոթքների, շարականների և սաղմոսների արտասանությամբ:

Ամեն օր, հավարտ երեկոյան ժամերգության, աղոթասացությամբ, շարականներով և Սուրբգրային ընթերցվածներով կատարվեց հոգևոր հատուկ պաշտոն, իսկ վերջին օրը, մյուռոնօրհնության նախատոնակին, գիշերը՝ նաև հսկման կարգ:

2. ՍՈՒՐԲ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում մյուռոնօրհնությունն այն յուրահատուկ և հոգեպարար արարողությունն է, որ իր եպակիության շնորհիվ ի մի է բերում, համախմբում համայն հայությանը՝ ի սփյուռս և ի Հայաստան, իր հրաշակերպող զորությամբ կեղում Սուրբ Հոգին յուրաքանչյուր հավատացյալի հոգում:

8 սեպտեմբերի: Սրբալույս Մյուռոնի օրհնության Սուրբ արարողություն: Դարեր ի վեր Սուրբ Մյուռոնը եղել և է՝ հայ հավատավորի գոյության, հարատևության կնիքն ու խորհրդանիշը: Դարեր շարունակ, նաև այսօր, աշխարհի տարբեր անկյուններից, որպես ուխտավոր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են ժամանել ապգիս հավատավոր կավակունք՝ խոնարհվելու վերանկախացյալ Հայաստանում երկրորդ անգամ օրհնվող հայոց հավատի կնիք Սուրբ Մյուռոնի տաք կաթսայի առջև՝ հայցելու Բարձրյալի գութն ու շնորհները:

Հայոց Եկեղեցում Սուրբ Մյուռոնի կիրարկումը գալիս է առաքելական ժամանակներից: Ըստ ապգային մի հին ավանդության, որ բերված է նշանավոր հեղինակ Վանական Վարդապետի (1181-1251) «Գովեստ

հայ ապգին» աշխատության մեջ. Քրիստոսի օրհնած յուղը Հայաստան է բերել ապգիս առաքին լուսավորիչ Ս. Թադեոս առաքյալը: Համաձայն մեկ այլ ավանդության, Հայաստանյայց Եկեղեցում Սուրբ Մյուռոնի օրհնությունն սկսվում է Ս. Գրիգոր Լուսավորչի ավետարանագործությունից: Առաջին անգամ անուշահոտ յուղը մեռոն բառով է բացատրում Հովհան Օձնեցի Կաթողիկոսը:

Հարկ է նշել, որ մինչև 13-րդ դարը մեր մատենագրության մեջ հանդիպում ենք յուղի երեք տեսակի հիշատակության, թեև Սարգիս Շնորհալին իր «Կաթողիկեայց թղթի մեկնութեան» մեջ թվարկում է չորսը: Առաջին և մեծը Ավագանի յուղն է, Սուրբ Հոգու շնորհների օրինակը, որ կոչում ենք Ս. Մյուռոն, այսինքն՝ բոլոր ախտերի մեռուցիչը: Երկրորդը՝ երեխաներին օծելու յուղը, որ օրհնում են քահանաները, երրորդը՝ հիվանդաց յուղը, և չորրորդը՝ վսխճանելոց յուղը: Այս թվարկմանն այլևս չենք հանդիպում 14-րդ դարից հետո:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Մյուռոնի հիմնական նյութերն են ձիթենու յուղը և բալասանը: Վաղարշապատում հրատարակված Մակար Ա Կաթողիկոսի Մյուռոնի օրհ..ության Մաշտոցում նշված Ս. Մյուռոնի նյութերի թիվը հասնում է 45-ի, իսկ վերջում հիշվում է. «Եւ եթէ յայս նիւթերոցս մին կամ երկու եւ կամ երեք պակաս լիցի՝ մի արգելցես զՄեռոնի օրհնելն»: Մյուռոնի պատրաստման համար գործածվող ծաղիկների ու հունդերի նյութերը, իրենց բուրումնավետությամբ, խորհրդանշում են քրիստոնեական հավատքի և այդ հավատքով իրագործված կյանքի անուշահոտությունը: Յուրաքանչյուր ծաղիկ կամ անուշաբույր արմատ խորհրդանշում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի աստվածային հատկանիշներից մեկը:

Սրբալույս Մյուռոնը հայ հավատացյալի հայեցիության կնիքն է, Եկեղեցու և ժողովրդի միության խորհրդանիշը: Ըստ քրիստոնեական Եկեղեցու հին սովորության, Ս. Մյուռոնն օրհնվում էր Ավագ հինգշաբթի օրը: Սակայն մեր Եկեղեցին հաստատուն օր չի ունեցել: Այդ մասին Էջմիածնի Մաշտոցն ասում է. «Եւ յաւուր Մեծի Հինգշաբթի եւ կամ յաւուր Պենտեկոստէ եւ կամ յաւուրս ինչ պատշաճաւորս»: Հայաստանյայց Եկեղեցում մյուռոնօրհությունը սովորաբար կատարվում է 5-7 տարին մեկ: 1868 թվականից սկսյալ առ 1926-ը Ս. Մյուռոն է օրհնվել տասն անգամ:

Այնուհետև, երկար ընդմիջումից հետո, հուրախություն հայ հավատավորի, 1955 թվականի հոկտեմբերի 8-ին, Ս. Թարգմանիչ Վարդապետների տոնախմբության օրը, ի վերջո հնչում են Մայրավանքի սանգեղի երկար սպասված զողանքները՝ համայն հայությանը հրավիրելով նոքօրհնյալ Մյուռոնով հայաբար վերանորոգվելու և առաքելավանդ հավատքով վերակենսավորվելու: Այդ և հետագա չորս անգամը Սրբալույս Մյուռոնն օրհնվում է ապգիս երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ձեռքով: Վերջին մյուռոնօրհնության նվիրական արարողությունը կատարվեց 1991-ի սեպտեմբերի 25-ին, Վարագա Ս. Խաչի տոնին: Ի լուր ներկա հավատացյալ հայորդիների, երջանկահիշատակ Հայրապետն այն անվանեց Անկախության Մյուռոն:

Սույն թվականի սեպտեմբերի 8-ի առավոտյան ժամը 9-ին խանդավառությամբ դողանջեցին Մայրավանքիս զանգերը և ի լուր համայն հայության ավետեցին մյուռոնօրհնության Սուրբ և անմահ Պատարագի սկիզբը: Օրվա պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոլատյանը:

Հընթացս մատուցվող Սուրբ Պատարագի, Նորին Սրբությունը Վեհարանում հանդիսավորությամբ զգեստավորվում է հայրապետական շուքով: Համաձայն իրենց աստիճանի, նույն կերպ զգեստավորվում են և տասներկու եպիսկոպոսներ:

Ավարտվում է Սուրբ Պատարագը: Հանդիսավոր թափորը, ներկա հոծ բազմությունը ճեղքելով, ուղղվում է դեպի Վեհարան:

Հավարտ Ս. Պատարագի Մայր Աթոռ են ժամանում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության նախագահներն իրենց ավագանիով, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպաններ, ինչպես նաև դիվանագետ այլ այրեր՝ ներկա գտնվելու Սրբալույս Մյուռոնի օրհնության հանդիսավոր արարողությանը:

Կրկին դողանջում են Մայրավանքիս զանգերը՝ ի լուր ամենքի ավետելով Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողության սկիզբը:

Վեհափառին շրջապատած հոգևոր դասը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ մեկտեղ, Վեհարանից ուղղվում է դեպի Մայր Տաճար: Երկշարք՝ Վեհափառի աջ և ձախ կողմից ընթանում են վեցական եպիսկոպոսներ՝ տանելով Մյուռոնի օրհնության համար անհրաժեշտ Մայր Աթոռի ավանդական սրբությունները՝ Ս. Ավետարանը, Ս. Մյուռոնի նյութերի անոթը, Ս. Արիստակես Հայրապետի Աջը, Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի Աջը, Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, բալասանի անոթը, հին Մյուռոնը՝ մեռոնաթափ աղավնիով, Ս. Գեղարդը, Կենաց խաչափայտը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մյուռոնով լի անոթը:

«Խորհուրդ Խորին» շարականի երգեցողությամբ և Մայր Տաճարի զանգերի դողանջների ներքո թափորը ելնում է Տրդատա կամարից և առաջնորդվում դեպի Մայր Տաճարի մուտքի մոտ հատուկ մյուռոնօրհնության համար պատրաստված բեմահարթակ:

Ավանդաբար Պատարգի ընթացքում Ս. Մյուռոնի կաթսան դրվել է Մայր Տաճարի բեմում, սակայն հաշվի առնելով, որ բազմահազար ուխտավորները ի զորու չեն տեղավորվելու Մայր Տաճարում, նրանք բոլորն էլ աշխարհի տարբեր կողմերից գալիս են օրհնության սրբազնախորհուրդ ընթացքին հաղորդվելու տենչով և ջերմ փափագով, վերջին շրջանում կաթսան դրվում է զանգակատան առջև պատրաստված բեմ-սեղանին:

Սկսվում է Ս. Մյուռոնի օրհնության կարգը:

Մայր Աթոռի լուսարարապետը՝ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը, բացում է Ս. Մեռոնի կաթսայի կափարիչը, իսկ դպիրները երգում են «Բացեր Տէր այսօր զգանձդ երկնային» շարականը: Երկնային շնորհները կրող բացված այս գանձի մեջ

Հայրապետը նախ լցնում է 40 ծաղիկների և անուշաբույր արմատների նյութերը, ապա բալասանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մյուռոնը՝ որպես մեկ Եկեղեցի և մեկ սիրտ ու ապգ լինելու խորհրդանիշ: Սիա և Ս. Մյուռոնի օրհնության ամենախորհրդավոր պահը: Մյուռոնաթափ աղավնիով Վեհափառ Հայրապետը հին մյուռոնն է լցնում նորի մեջ: ԺԱ դարի մատենագիր Անանիա Սանահնեցու բնորոշմամբ, երբ հին մյուռոնը խառնվում է նորին, հնի մեջ եղող սրբալույս շնորհը փոխանցվում է առ այն:

Քանի որ մյուռոնի միջոցով խորհրդաբար փոխանցվում են Ս. Հոգու շնորհները և որոնք օրհնվող նոր մյուռոնին են խառնվում հնի հեղմամբ, այն պահին, երբ լցվեց հինը, բարձր ու կիլ ղողանջեցին Մայր Տաճարի կանգերը, «կի լիցի դղրդումն»: Այսինքն՝ ինչպես Հոգեգալստյան ժամանակ վերնատանը հավաքված առաքյալների վրա իջավ Սուրբ Հոգին և «հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն» (ԳՈՐԾՔ Բ 2), այնպես էլ հին մյուռոնի լցման պահին օրհնվող նոր մյուռոնի Ս. Հոգու շնորհներով պատելն է խորհրդանշում կանգերի այս անկրկնելի ղողանջը:

Աղավնու Ս. Հոգուն խորհրդանշելու համար, հին մյուռոնը նորին խառնելիս, Ամենայն Հայոց Վեհափառը երգում է «Առաքելոյ Աղաւնոյ իջանելով» շարականը:

Լուսավորչի Սրով Մյուռոնը տյառնագրելուց հետո, Վեհափառը շարունակում է կարդալ մյուռոնօրհնության հատուկ աղոթքները: Վերջում ընթերցվում է Սուրբ Ավետարանը: Ս. մյուռոնօրհնությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Եպիսկոպոսները, Սուրբ մասունքները ձեռքներին, եկեղեցական դասով, թափոր կազմած, նույն հանդիսավոր ձևով, «Որ կշնորհիս աստուածային» շարականը երգելով, Վեհափառին շրջապատած, ուղղվում են դեպի Վեհարան:

Սրբալույս Մյուռոնի օրհնությունն ավարտվել է: Սակայն ամեն մի հավատացյալ, իր նվիրական իղձն իրականություն տեսնելու ակնկալությամբ, երկյուղիվ մոտենում է տաք կաթսային, հպվում նրան ձեռքով կամ թանկարժեք իրով՝ ի նշան հավատի անմեկնելի դրսևորման:

Այս մյուռոնօրհնությունը հայոց հինավուրց ու տառապյալ երկրի և հայրենի մեր ժողովրդի համար թող դառնա աստվածային շնորհների հեղման աղբյուր: Թող յուրաքանչյուրի հոգում հեղվի Սրբալույս Մյուռոնից ճառագայթված աստվածային ճշմարտությունը, որպեսզի նրանց սրտերում բնակվեն սերն ու եղբայրությունը, հաճությունն ու խաղաղությունը, հայրենասիրությունն ու ազգասիրությունը:



Ս. Մյուռոնի օրհնության առիթով հավաքված հոգևորականները Վեհափառ Հայրապետի հետ Մյուռոնօրհնությունից հետո

Ո՜վ հավատավոր հայորդի, Նոր Մյուռոնի Սրբալույս այս կաթսայի առջև ուխտի՛ր հավատարիմ մնալ հայրերիդ լույս ու կենսատու հավատքին, աղոթի՛ր հանուն երկրիդ ու աշխարհի խաղաղության և ընդմիշտ մնա՛ արժանի ժառանգորդը մյուռոնյալ ժողովրդիդ...

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ